

ԱԳԱԹԱՆԴԵՂՈՍԻ ԽՈՏՅՈՑ ԲԱՌԵ

Այս բառը՝ որ Ագաթանդեղոսի պատմութեան մէջ մէկ անգամ միայն գործածուած է և հայ մատենագրութեան մէջ ուրիշ անգամ չի պատահիր, թէ ձեռվ և թէ նշանակութեամբ անստոյդ է: Նոր Հայկազեան Բառարանը կը մեկնէ «առաջակողմն ոլոքի, երեսք սրունից. ծունկն և ծալք նորա մինչև ցոտս. այն է գունք, որ ի չոքին շօշափէ զգիտին»: Սակայն այս նշանակութիւնը անյարմար է տեղին: Ագաթանդեղոսը կը գրէ. «Եւ ետ հրաման բերել կոճեղս փայտից և առնել ըստ ոլոքի խոտցոց ոտից նորա և դնել և պնդել ուժգին առատկօք»: (Ագաթ. § 102): Եթէ խոտցոցը ծնկան գլուխն է, ուրեմն խօսքին իմաստը պիտի ըլլայ «ոտքերուն ծնկնագլուխին ոլոքին համեմատ» կամ, եթէ յատկացուցչի տեղափոխութիւն ենթադրենք՝ «ոտքերուն ոլոքին ծնկնագլուխներուն համեմատ»: Երկու պարագային ալ իմաստը անյարմար է, մանաւանդ երբ նկատի առնենք նախորդ և յաջորդ բառերը: Կը հրամայուի բերել փայտի կոճեր և շինել ոլոքներուն համեմատ (ի՞նչ շինել) և ոտքերը դնել (մւր դնել) և կապել ամուր չուաններով:

Բառին բուն իմաստը երեան կուգայ, երբ այս նախադասութիւնը համեմատենք Ագաթ. § 69 հատուածին հետ. «Եւ ետ կապել զնա ձեռս յետս և արկանել գայլ ի բերան նորա... և տալ գելոցս կրծից նորա և արկանել առասանս ի կապս կրծից գելարանացն, կապել և համբառնալ»: Այս վկայութենէն կ'երկայ, որ մարմնին զանազան մասերուն համար կային տանջանքի գործիքներ, ինչպէս բերանին գայլ, կուրծքին զելոց, որուն կապելով չուանները՝ սկսան քաշել:

Այսպիսի գործիք մըն ալ պիտի ըլլայ խոտցոցը՝ որ փայտէ շինուած էր՝ ոտքին ոլոքին յարմարութեամբ: Այս իմաստով շատ յարմար կուգայ ըսել «բերել կոճեղս փայտից և առնել ըստ ոլոքի խոտցոց ոտից նորա», — փայտէ կոճեր բերին և ոլոքին համեմատ անոր ոտքերուն խոտցոց շինեցին: Այնուհետև ոտքերը դրին այս խոտցոցին մէջ և չուաններով պրկեցին, ճիշտ գելոցի պէս:

Մեր ենթադրած այս նշանակութիւնը ստուգելու համար դիմեցինք յունարէն Ագաթանդեղոսին: (Արաբերէնը՝ որ հրատարակեց Ն. Մառ., թրգմ. Յուսիկ արքեպս. տպ. Վղրշպտ. 1911, պակաս ըլլալով՝ այս կտորը դժբախտաբար չունի և անկէ երկու հատուած յետոյ միայն կսկսի): Յոյն թարգմանութիւնը կատարելապէս հասաւատեց մեր ենթադրութիւնը: Մեր հատուածին թարգմանութիւնը այսպէս է յունարէնի մէջ. Կαι էկէլευσε խօրմօն:

Էնլառ էնեշմիդուն, և շահամաս կատա տան անտառնիւնան տան ոօծան անտօն, և մետա օտքագաղուց պերթաման ունանակութիւնը... (յն. Ագաթ. տպ. Lagarde, Göttingen 1887, էջ 26): Խոտցոց բառին յոյն համապատասխանն է շահամաս, որ կը նշանակէ «մահապարտները կապելու ցից».—(անոր ոտքերուն սրունքներուն համեմատ ցիցեր շինել):

Հետաքրքրական էր անշուշտ, գիտնալ, թէ նոր Հայկազեան Բառարանը որմէ առնելով և այնպէս մանրամասն կերպով կը մեկնէ բառս «առաջակողմն ոլոքի և այլն»: Ըստ իս այս նշանակութիւնը յոյն Ագաթանգեղուսէն է: Յոյն թարգմանութիւնը վերոյիշեալ հատուածին մէջ ճիշտ հեաւեալ բառաշարքն ունի. «և առնել խոտցոց ըստ ոլոքաց ոտից նորա»: Կը տեսնուի, որ հայերէն բառերուն շարքը քիչ մը փոխուած է. այնպէս որ, եթէ հայերէնն ու յունարէնը անփոփոխ դէմ դէմի դնենք, հայերէն ըստ ոլոքի բառին դէմ կուդայ յունարէն խոտցոց, հայերէն խոտցոց բառին դէմ կիյնայ յունարէն ըստ ոլոքաց (անտառնիւնան), իսկ ոտից նորա կը մնայ անփոփոխ: Նոր Հայկազեան Բառարանը մեծ անփութութեամբ բառաշարքին փոփոխութեան ուշադրութիւն դարձուցած չէ և մեքենապէս խոտցոց բառին դէմ գտնելով անտառնիւնան (բառացի կը նշանակէ «առաջակողմն ոլոքի»), խոտցոցին ալ այս նշանակութիւնը տուած է:

Խոտցոց բառին նշանակութիւնը ճշտելէ յետոյ՝ կը մնայ ճշտել նաև անոր ձեւը: Էջմիածնի տպագրութեան ծանօթութիւններէն կերեայ, որ ձեռագիրներն ունին այստեղ 11 տարրեր ընթերցուած. (խոտցոց, խոտցոց, խոտցաց, խոցաց, խոտցոյ, խոտցացն, խոտուցաց, խոստաց, խոտցոյց, խոցաի, խոցոտիցն). Նոր Հայկազեան Բառարանը ասոնցմէ դուրս ունի նաև խոսցաց ձեւը. կրկնագրին մէջ այս կտորը կը պակսի. Էջմիածնի հրատարակիչները ընտրած են խոտցաց. Նոր Հայկազեան Բառարանը ուղղականը կը գնէ խոտցոց, սեռ. խոտցաց և խոտցոց: Ըստ իս ընտրելի ձեւն է խոտցոց: Բառը կազմուած է (գելոց ձեին նման) ոց մասնիկով, արմատն է խոտոց «յօդուած, մարմնին ներքին խաղերը», որ զործածուած է եփրաւեատ. «Բանն Աստուծոյ հատու է մինչև յօդս և ի խոտուցաւ: Ասոր հետ նոյն ըլլալու է նաև երևանի և Ղազախի բարբառներուն խոտցոց բառը՝ որ կը նշանակէ «ղանակով կտրած ձկան մասն, կտոր». որմէ խոտոցել «ձուկը մաս մաս կտրել». նշանակութեան զարգացման համար հմմատ. յօդ «մարմնի յօդուած» և «կտոր». Յօդ յօդ զմարմինն կոտորէին. Յայսմ. Քակտեալ ցրուեցաւ մարմինն յօդ յօդ. Պիտառ: